Արձանագրություն N 2

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/184» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի եղանակով ԵՊՀ Գրադարանի կարիքների համար տպագրական ապրանքների և մարտկոցների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04.09.2024թ.

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Եզնիկ Միրզոյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),

հանձնաժողովի անդամներ՝

Աիդա Սարգսյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

Հարություն Աբգարյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

հանձնաժողովի քարտուղար՝

Լուսինե Այվազյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. **Էլեկտրոնային աճուրդի եղանակով գնման ընթացակարգի շրջանակներում հրավերի պարզաբանման տեքստը հաստատելու մասին**

1.1 Հիմք ընդունելով **04.09.2024թ. ստացված հարցադրումը** հրավերի վերաբերյալ և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց՝

- Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը և հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում:

Հարցադրում N 1 (04.09.2024թ.) «Բարև Ձեզ, հայտնում ենք, որ 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժիններով ներկայացված գնման առարակների տեխնիկական բնութագրերին համապատասխանում է նաև TOTAL ֆիրմայի մարտկոցները, ինչով պայմանավորված հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները խնդրում ենք փոփոխություն կատարել հրավերում և հրավերի տեխնիկական բնութագրերում վերոնշյալ չափաբաժինների մասով ավելացնել նաև TOTAL ֆիրմայի բառերը. Կանխավ շնորհաալ ենք»:

Պարզաբանում N 1 (04.09.2024թ.) «Հարգելի՛ մասնակից, տեղեկացնում եմ, որ նշված չափաբաժինների դեպքում պատասխանատու ստորաբաժանման համար նշված ֆիրմաների մարտկոցներն են ընդունելի: Հավելյալ նշեմ, որ համաձայն № 526-Ն որոշման կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի՝ հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը»:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. **Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունը.**

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել էլեկտրոնային աճուրդի ավարտից հետո:

Հանձնաժողովի Նախագահ՝	Եզնիկ Միրզոյան	ստորագրություն
Անդամներ՝	Աիդա Սարգսյան	ստորագրություն
	Հարություն Աբգարյան	ստորագրություն
Քարտուղար՝	Լուսինե Այվազյան	ստորագրություն